ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/281

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Մասնակից՝ «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնանշման հարցում, տնտեսական, սանիհիգենիկ և մաքրիչ նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18740-2020 գրությամբ «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.12.2020թ.-ի թիվ ՍՄ//65540-2020 գրության հիման վրա, 15.12.2020թ.-ին «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 16.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/281 համարի ծածկագիրը:

24.12.2020թ.-ին և 14.01.2021թ-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.01.2021թ.-ին:

2. **<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 11.12.2020թ.-ի թիվ ՍՄ//65540-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իր ենթակայությանը հանձնված «Երևանի N1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի կարիքների բավարարման նպատակով ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ ծածկագրով կազմակերպված գնման ընթացակագի շրջանակներում հայտ էր ներկայացրել նաև Սյուզաննա Ղազարյան ԱՁ-ն, որը գրավոր հրաժարվել է գնման ընթացակարգին հետագա մասնակցությունից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. **«Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 16.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18740-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. **ՍՑ-LO**-2020/281 **ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տնտեսական, սանիհիգենիկ և մաքրիչ նյութերի ձեռքբերման նպատակով 04.11.2020թ.-ին հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ն:

ii. «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ն 30.11.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հրաժարվում է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով մրցույթի՝ 2-րդ և 9-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացրած գնային առաջարկից:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել

«Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 2-րդ և 9-րդ չափաբաժնների մասով:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18740-2020 գրությամբ «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է

հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով հայտարարված գնանշման հարցմանը և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ՏԻ» ծածկագրով գնման գործընթացի 2-րդ և 9-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացրած գնային առաջարկից, ըստ էության, հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից և ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18740-2020 գրությամբ «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/281 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սյուզաննա Ղազարյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**